ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2023 թվականի N 2169 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 1909-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» N 1909-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) 22-րդ կետի 2-րդ ենթակետը «հիման վրա։» բառերից հետո լրացնել հետևյալ բառերով.

«Արարատյան դաշտի սահմաններում գտնվող Հրազդանի և Քասախի գետավազաններում արգելվում է գրունտային ջրերից ձկնաբուծական նպատակով ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը, իսկ այլ նպատակներով ջրօգտագործման թույլտվությունները տրամադրվում են միայն ջրախնայող համակարգերի ներդրման դեպքում (կաթիլային, անձրևացում, շրջանառու համակարգ)։».

2) 77-րդ կետի 6-րդ ենթակետից հանել «Ներկայումս մասնակի գործում է միայն մեխանիկական մաքրման կառուցվածքները: Կայանի կառուցվածքների և սարքավորումների վիճակն վթարային է: Կեղտաջրերը մեխանիկական մաքրումից հետո, կոլեկտորով տեղափոխվում և լցվում են Հրազդան գետը: Ներկայումս Մասիսի կեղտաջրերի մաքրման կայանի արտադրողականությունը կազմում է 5000 մ^3/օր, որն իրականացնում է միայն մեխանիկական մաքրում:» բառերը:

2. Սույն որոշումը չի տարածվում սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահին գործող ջրօգտագործման թույլտվությունների երկարաձգման վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

14.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ